այս կողմերում, ինչպես Որբելյանները 1438 թվին գաղթեցին դեպի Լոռի*։ Բաղեշի և Վանի շրջաններում տոհմական կամ տեղերի անունները** կարող են կրոնական լինել այսպիսի յենթադրության։

Զաքարիայի գրական աշխատություններով զբաղվել են Վիեննայի Մխիթարյան հայրերից Տաշյան*** և Ակինյան. մենք ևս անցողակի կերպով առիթ ենք ունեցել հիշելու նրա մասնակցությունը Սուտ Կալիսթենեսի Աղեքսանդրի պատմության խմբագրությունների մեջ[1]։ ԺԳ. դարում արդեն Խաչատուր Կեչառեցին զբաղվել եր այդ գործով, այժմ Գրիգոր Աղթամարցին, նորա աշակերտ Զաքարիա Գնունյաց յեպիսկոպոսը և սրանց ժամանակակից Հովասափ Սեբաստացին առանձին հետաքրքրություն են ցույց տալիս դեպի այդ յուրատեսակ վեպը։ Աղթամարցին կոփաներ և գրել և կիսով չափ նկարազարդել Յերուսաղեմի № 473 ձեռագիրը, Մարգարե Արճիշեցու գրչությամբ. իսկ Զաքարիան վոչ միայն կոփաներ և գրել, այլ և գրել և նկարազարդել և յերկու որինակ. Հովասափ Սեբաստացին ևս գրել է և նկարազարդել Բերլինի Ms. Or. № 805 ձեռագիրը։

Զաքարիայի առաջին որինակը պատրաստված է 1544 թվին Պոլսո Աստվածատուր պատրիարքի համար, վոր հատուկ ընծայականով մատուցել է նրան. ավելի կարևոր տեղեկություններ է տալիս գլխավոր հիշատակարանը Զաքարիայի անձի մասին. «Եւ ես թափուրս յամենայն բարեաց զԶաքարիա (s!) մեղապարտ եպիսկոպոս աշակերտ Գրիգորիս կաթողիկոսին և Յովսեփ վարպետին, որ յայսմ ամի փոխեցաւ ի դասս անմահից եւ եղև ինձ մեծ սուք։ Եւ տեսի զփափաք եւ զսէրն ֆրերիս մերոյ՝ յանձն առի եւ Աստուծոյ աջողութեամբն կատարեցի գրով եւ ծաղկեալ ոսկով եւ երանգ երանգ գունով աւճտեցի սիրալիր եղբաւրս մեր տէր Աստուածատուր պուետիկոսին»*։ Հիշատակարանը գրված է ՋՂԳ (=1544) թվին ի Սուլիմանատիր, վոր Պոլսոյ յեկեղեցիներից մեկն եր**։

Նեգտանիբոս ցույց է տալիս աստղերը. Մանչեստրի ձեռագրից. Պատկեր 104.

Գրիգորիս կաթուղիկոսին և Հովսեփ վարպետին Զաքարիան հիշում է և ուրիշ տեղ, 1576 թվին յուր գրած և նկարազարդված շարականի մեջ. «Դարձեալ ազաչեմ յիշել ի տր զզուսուցիչքն (s!) իմ զշնորհազարդ և զպատուական հայրապետն զԳրիգորիս Աղթամարցին և զՅովսէփ վարպետն, որ շատ աշխատեցան յուսուցանելն իմ» (Հավել. Բ. 36)։ Հովսեփին վարպետ և անվանում նկարիչ լինելու համար, վոր այդ ժամանակ սովորական տերմին եր մանրանկարիչների համար։ Բայց նա և գրիչ եր և վոտանավոր գրող***։

Զաքարիան Աղեքսանդրի պատմության մի յերկրորդ որինակ պատրաստել է Հռոմում, տարաբաղդաբար ժամանակն անհայտ, և բերել է Հայաստան, Խաչատուր Կեչառեցու հիշատակարանների մեջ ներմուծություններ անելով և համարեցնելով իրենց յերկուսի անվան։ Հենց այդ ներմուծություններն էլ մեզ համար կարևոր են, վորովհետև միակ աղբյուրն են Զաքարիայի, զորա հետ և Խաչատուր Կեչառեցու, Պոլսյան ծագում ունենալու մասին։ Այդ ներմուծությունները հնարավոր է ճշգությամբ վորոշել նախազաքարյան ձեռագիրների համեմատությամբ, վոր կատարել է հ. Տաշյան։ Այդ տեղից մենք իմանում ենք, վոր նա գրել է «ի մեծ քաղաքն Հռոմ առ պապն Ֆռանկաց, ի յաթոռ նստեալ Պետրոսի եւ Պաւղոսի առաքելոցն, սրբագրեալ ի գրոց հնոցն սակս աւգտի (ընդգծվածները Կեչառեցու ազդեցությամբ) եւ զարդարեցի ոսկով և տնաւրինականով եւ ոտանաւորով ի փառս փրկչին, եւ բերեալ ի հայս պարգևս մեծ վարդապետին և քաջ վարպետին (հակառակ Տաշյանի որինակի, ավելի ճիշդ) իմոյ Եսայեայ եւ պարոն եղբարցն իմոց եւ հարցն Պաւղանց տոհմին»։ Ունի և ուրիշ հիշատակություններ, ինչպես.

«Զվարդապետն աստուածազարդ զԽաչատուր
Կեչառեցի
Եւ ի շառաւիղէ նորին Զաքարիա ախմար
Գնունցի,
բազում ջանիւ նորոգել զյիշատակ հարանց
իմ նախնի»։

Խաչատուր Կեչառեցու բարառնության տակը գրած հիշատակարանի վրա,—«Որք լսէք զաղիողորմ բարառնությունս զարմարող սորա զԽաչատուր Կեչառեցիս», ավելացրել է «և ի սոցին շառաւիղէ Զա-

* Թովմա Մեծոփեցի. 117/118։

** Ս. Կանայան. Զոլանց տուն. Արարատ. 1910. 892. առանձին արտատպությամբ ևս։

*** Ուսումնասիրություն Սուրբ Կալիսթենեսայ վարուց Աղեքսանդրի. Վիեննա. 1892։

[1] Արարատ. 1918 թ. 246, 261։ 1910 թ. 4, 8 և շար.։

* Տաշյան. 157։ Ակինյան. 7. 46։

** Ձեռագիրն այժմ գտնվում է Մանչեստրի քաղաքային մատենադարանում № 2 և սեպհականություն եր The John Rylands գրավաճառի, իսկ ավելի վաղ Lord Grawford and Balcarres ընտանիքի։

*** Արարատ. 1919 թ. 4—5. 33։ Կոստանեան. Նոր ժողովածու. Վաղարշապատ. 1903 թ. 42։